

# Ա Ս Տ Ա Բ Կ Ե Ր Ե Խ Ե Լ Ե Ա Ն

Օ Ք Ա Փ Ք Ք

Բ Ե Ր Ե Խ Ե Լ Ե Ա Ն

Տ Ե Տ Ե Ս Ա Ն Ե Խ Ե Ա Ն

Ա. Տ Ա Ր Ե . Թ Ի Ւ 4.

1855

Տ Ո Ւ Վ Ա Ր Ե 4.

## Յ Ե Ր Ա Յ Ա Կ Ե Ը

Նոր տարի , նոր շնորհական ու նոր օրադր : 1



Հ Ա Մ կատարեցաւ հին  
տարիին շրջանը , խրեցան  
անոր անփառեցը . թռաւ  
ու առջի տարիներան կարգը մասաւ .  
տարաւ իրեն հետ նաև , մահկանաց  
ու այ վաղանցիկ կեռուցեն՝ մաս մ'ալ ,  
թաղեց նաև իրեն հետ կերպ կերպ

1 Ա յո նառը կողանցի առջ որը Ընկերութեան  
անուններուն ու բրուգ թեանը խոռու առ առենացաւ  
առ թեան պիտուի է , որի որ արժան զառացինք  
մեր արդ ու Ընթերցաւ ալ հաղորդել :

դառնութեանց ու վատաց խում մը մ'ալ .  
կերեց իր կեանքին հետ մարդկացին  
զարմէն շատերուն կեանքն ոյ :

Հ ամ սնոր յաջորդեց գալձեալ մեկ  
նոր տարի մը , գարձեալ իրան հասան  
ու բախութեան ու բերկրանաց օրեցը ,  
գարձեալ կողմանդ մ'ալ հասաւ . այս  
ու բախութեց ձայնը ամէն կողմանէ օդը  
կը մ'նոտացնէ , մեծ ու պատիկ շնոր  
հաւոր նոր Տարի ըսելով իրարաւ կը  
փագէն , տուները աւ ճամբաները զի-  
րար շնոր հաւորելու մրմնիւ ններավ կը  
լեցաւին , տղօցը ու երիտոսարդք կը  
ցասկէն ու կը ծիծալին , յետին առ-

տիճան ծերերն անդաման օրը կը ճար-  
պիկնան, հիւանդներն անդամկը ճար-  
տարորին, մէկ խօսքով ամէն հասա-  
կի տէր մարդիկ իրարու նոր տարիին  
գալուստը կը մազթեն ու անոր հա-  
մար կը խնդան . ամէն դին ասոր հա-  
մար իրար անցում կ'ելլէ, ուրիշ բան  
մը չի լսուիր բայց միայն տարիին նո-  
րոգվելուն վրայ միահաւասար չափա-  
զանց խնտում մը :

Ոիրելի ընկերներս, գիտէք արդ-  
եօք թէ չկայ անանկ մէկը որ իր խըն-  
տումը քիչ մը մէկդի թողլով, ան-  
ցածին տխուր հետքը դիտէ, ու իր  
մտաց կշռովը սրաթռիչ տարւոյն մէջ  
ձեռք բերածը լսւ մը կը շռէ :

Իմաստունը տարիին շըջանին շուտ  
շուտ գառնալուն չի խնդար, հասկա  
անցածին մէջ իր շահն ու վիասը հաշ-  
ուելու կը նստի :

Ոէր զսւարթ մանկութիւններուն  
ծաղկիները թոռմեցան . ահա երխաւա-  
սարդութեան տարիիներնուու մէկն ալ  
թռաւ գնաց, ու այսպէս հետղէնտէ  
պիտի երթան . բայց արդեօք մէր այս  
կարծատեւ ժամանակնիս ամէն մէկ  
վարկեաններուն հետ առաքինութեն-  
ե գովելի գործքի մը մէյմէկ քաղցր  
յիշատակներ կրնանք կոր թողուլ .  
արդեօք անցելցն վրայ ցաւելով եկա-  
ծին յարգը կրնանք կոր ճանչնալ :

Այսօր կազմանդ, վաղը Օնունդ,  
մէկալօր Օատիկ է ըսելսվ կը պարենք  
ու կը խնդանք. բայց անոնք ալ կ'անց-  
նին, կ'անցնի ան տարին ալ ուրիշ  
մալ կուգայ . և մենք միշտ կ'ուրա-  
խանանք, չենք գիտեր որ ամէն մէկ  
տարիին գալուն դէկու ՚ի գերեզման կը  
մօտենանք . չենք գիտեր որ ժամանա-  
կին անիւներուն շուտ գառնալովը  
մենք ալ մահուան կը հասնինք, ամէն  
հասակի տէր մարդիկ չեն մտածեր ա-  
սիկա . չենք խորհիր երբեք մեր ու-  
նեցած պարտասորութիւններնուու վր-  
այ, անոնք ժամ մը առաջ կատարե-

լու համար ալ բնաւ հոգերնիս ըըլլար .  
օր օրի ու տարուէ տարիի կը ձգենք,  
գալ տարի անշուշտ կ'ընենք կ'ըսենք,  
ու տարին կուգայ կ'անցնի կ'երթայ .  
ու մէնք գեր պարտքերնիս չենք կա-  
տարեր :

Կասնկալ տարիները կ'անցնին, և  
ամէն մէկ ժամ իրեն քաղցր ու աղդու-  
ծայնովլ հրաժեշտնին տալով իմացը-  
նել կ'ուղեն մեղ որ մէյմէկ առաքի-  
նութիւն ու բարի գործ իրենց հետ  
թողունք, կամ թէ մեր պարտաւորու-  
թիւննիս կատարելու չը մոռնանք . ին-  
չու որ ներկան ոչինչը անցունելովնիս  
ապագային մէջ անանկ ատեն կ'ըլլայ որ  
միջոց չենք կրնար գոնել զանոնք կա-  
տարելու, անանիկ ժամ մը կ'ուգայ որ  
ոչ մէկը գիտէ բայց միայն չայր Կատ-  
ուած :

Պարտաւորութիւն ըսելսվնիս կը  
հասկլնանք մէկ մը պարտաւորութիւն  
առ Կատուած, որ ասիկա մեր առա-  
ջին գործքն է աշխարհիս վրայ . աս է  
մեր առաջին պարագը զոր Կատուած  
մեղմէ կը պահանջէ առանց պատճա-  
ռի . և մենք ալ անշուշտ պիտի կատա-  
րեմք թէ որ զանի կը սիրենք, մեր հո-  
գեւոր պարտքն է որ զինքը սիրենք ա-  
մէն բանէն աւելի, հնագանդինք անոր,  
պահենք անոր ըսածները ու օր օրի նո-  
րէ նոր առաքինութիւններ գործելու-  
ետեւէ ըլլանք : Վհա ասոնք են մեր  
հոգեւոր պարտաւորութիւնները որ ան-  
շուշտ կատարելու ենք քանի որ ձեռ-  
քերնիս ժամանակ ունինք : Ոէկ մալ  
պարտաւորութիւն առ Կատ . մարգուս  
երկրորդ պարտքն ալ ասիկա է, որ իր  
ազգին ունին, և ամէն մէկ մարդ իր  
հոգեւոր պարտաւորութիւննեն ետեւ  
ասիկա ալ պիտի լինէ : Ոէր ունեցած  
պարտքերնիս է սիրել մեր աղդը, ա-  
սովլ աղդասէր ըլլալ, աղդերնուու հա-  
մար բան մը չինայել . մէկ խոսրով ա-  
մէն կողմանէ օգնել անոր : Վհ, ինչ  
գեղեցիկ պարտաւորութիւններն մըն է

ասիկա :

Ճեշտ առաջնորդ նման է, ինչու որ եթէ ան պահենք, աս ալ պահած կ'ըլլանք. յիշեցէք սիրելիք, ամենաշահարուղ Ասուուծայ Վալսէսի արված տասնաբանեայ պատուիրանին մէջի ան մեծ պարագը՝ որ մեր վրայ դրաւ. “ Ի՞նկերներնիս մեղնման սիրելու համար ։ մենք որ մէկ ազգ ենք, ըսել է իրարու ընկեր ու եղբայր ենք, ան ձերնուս պէս զիրար պիտի սիրենք, մէկլին սիրելովնիս ալ իրարու պիտի օգնենք :

Սիրելի ընկերներ, չեմ կրնար հոս տեղ լսել ձեր ան մեծ պարտաւորութեանը վրայօք՝ որ ըսկը ձեր սիրելի ազգին։ Վհ, ան գեղեցիկ ու աղնիւ պարտաւորութիւնը՝ որ անտարակոյս առաջլինէ ՚ի վեր ձեր սրտին մէջ դըրեր էիք. ահա հիմայ քիչ շատ ցուցը ցիք. գիտցաք ձեր պարագը կատարելու, ան գովելի պարտագը՝ որ ասօրվան օրս ըսկը ազգերնուս մեծ յօժարութեամբ ու սիրով. ահա ես ալ շատ ուրախ եմ ընկերներ, շատ ուրախ եմ ասոր որ պատճառ եղաք ինձի աղիմ ազգիս ունեցած պարագ կատարելու սկսիլ անանկ պարտագ մը՝ որ ազգը մեզմէ իր պահանջէ։

Ահա աս նոր տարիիս մուտքին հետ ազգերնուս մէջ ՚որ Ի՞նկերութեան ու ՚որ Օրագրի մը մուտքը զիս չափազանց կ'ուրախացնէ. ինչու որ պարագերնիս կատարելու ձեռնամուխ եղանք, և մեծ յօյս ունիմք ՚որ տուծմէ որ միաբան պիտի ջանանք մեր պարտագը լցցունելու .

Խօսքերնիս չերկնցունելով՝ կը հարցընեմ ձեզի հիմայ ընկերներ, գիտէք արդեօք մեր գործին ալ ի՞նչ կը պահափ, ասանկ մէկ պարտի մը բոլորովն կատարելուն ի՞նչ պէտք է, ասանկ մէկ օգտակար գործի մը յարաւեւութեանը ի՞նչ պէտք է. մէկ խօս-

քով ասանկ ազգասիրական գործի մը հետուրիշ ի՞նչ պէտք է. ոչ մէկ բան մը հապա միաբանութեան սէրը, միւտթեան աղնիւ ոդին, միաբանութե չերմ եռանելը, որ եթէ աս ալ միշտ ունենանք մեզի հետ ալ վախ չենք ունենար. կը յաջողինք, ու հաստատ միտվնիս դնենք որ եթէ միաբանութեամբ վարուինք, առաջ կ'երթանք :

“ Վմէն մէկ բարեաց մայրը միաբանութիւնն է, իսկ ամէն մէկ չարեաց ծնողն ալ անմիաբանութին է ։ , կ'ըսէ, մեր Շղիշէ իմաստուն վարդապետը, այն խիստ ճշմարիտ է ասիկա, տեսէք, ահա ազգերնուս մէջ այնչափ ընկերութիւններէն ծագած անմիւտ օգուտներն ու բարիքները ասոր ապացոյց չե՞ն մի, այսչափ գովելի գործքերը միաբանութեան արդիւնքները չե՞ն մի։

Ուրեմն ասոնք գիտնալովնիս միաբանութիւն ունենանք մէջերնիս. կը սեմ ձեզի հիմայ բացարձակ, գիտնաք որ եթէ մէկ վայրկեան մը միաբանութիւնը ատենք, չենք յաջողիր, ու ասիկա ալ աղէկ միավնիս պահենք. միաբանութիւնը ձեռքերնուս մէջ իբր մէկ վահան մը ունենանք անմիաբանութեան չարագրգիո զէնքին դէմ։

Ոէկ խօսքով, ընկերներ, քանի որ ատեն ունինք այս գովելի գործքին յառաջանալուն հմը աշխատինք ու քըրատընինք, որ անոր պտուղն ալ ազգին հետ վայելենք։ Վնանկ է նէ, բարեջան ընկերներ, եկէք ամէնքնիս մէկ աեղ մաղթենք Վստուծմէ, որ անշուշտ ձեռնատու է մեզի, շնորհելու մեզ իր օգոնութիւնը, զօրավիգն ըլլալու մեր ընկերութեանը, օրերը անցնին, տարիները նորոգվին, նոյն ինքն Վստուծ թէք ազգասէր ընթերցողներնուս աղնիւ կեանքը, և թէ աշխատաւորացս ամէն տեսակ փորձութիւններէ ու անյաջողութենէ ազատ պահելով, շատ տարի խառաղութեց

միաբանութեամբ հասցընէ , և այս  
մեր աղնիւ ընկերութիւնն աւ ան-  
խախտ ու հաստատ պահէ ու պտղա-  
քերէ , ամէն :

ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

### ԲԵՆԱՍՏԵԴՕՌԻ Թ. ԻՒ

Ամենայն իրազ՝ ու ժամանակն ոչ ուրախաթեան  
թուի , այց՝ տրամութեան : Բայց յետոյ նոյնաւ կը-  
թանցն հասնացնէ յարդարութիւն : Երբայ գո-  
12 . համար 41 :

Աւուրց յաւուրու ևս աճիմ  
Յաւուր աւուր նըւածիմ ,  
Զի՞ հարցանես գու զինէն  
Աճիմ ծաղկիմ թըլռանիմ :

Բայց նորանամ նոր տալ օր  
Առաւելում օր քան ջօր ,  
Գու զինչ ունիս արդիւնք բեցք  
Զի՞ ջօր կենացդ տեսեր նոր :

Լան աճեցոյց զիս ըղքեղ  
Փոխանս ետ արդ զիմքարտեղ ,  
Տարուան միոջ օրացոյց  
Սերկեան վաղուեանս յասպարեղ :

Այսօր վաղիւ յանկ անկեան  
Զիս կաղանդելքեղ շատք գան ,  
Ցերիր աւուրց երկընչիմ :  
Գոյ արդ հաւասոք գործք ընդ բան :

Աստ ժամանակս մատնացոց  
Նախինյորդոր զայդ տայ ցոց ,  
Հըսկել և կեաւ յաւիտեան  
Մի՞ լինելյու օրանցոց :

Այլ օր յաւուր ՚ի բարիս  
Փըրկել զինքնըդ և զդիս ,  
Սուրբ գիտութեամբ յաւիտեան  
Թէ աճեցուն գու կամիս :

Կաղանդս նաեւ օրացոց  
Ժամանակաւու քազմացոց ,  
Ըընորհաւոր նոր տարին  
Զայս նոր ընծայ քեղ եցոյց :

ԱՐԵԿԵԼԵԱՆՆ ԱՍՏԱԿԻ Նոր  
Սուրբ ժամանչաց մեղածոր ,  
Բերան գոլով և ընկեր  
Աճիլ էիւ ՚ի կեան նոր :

Արդ Քահանայս Աբգարեան  
Տէր Մեսորովս կեսարեան ,  
Ընկերութեանս տեսեալ գործ  
Գոհունակ լւալ օրհնաբան :

Ողթեմ վերուստ շահեկան  
Իջեն բարիք անխափան ,  
Եւ վայելովք և ընկերք  
Կացյեն տերամիք անսասան :

Կեւ որանցու վրացօք դատմաթիւն :

### ՓՈԹՈՐԻԿ

Ո՞հ , կը վախնամ թէ շատ գէւ  
փոթորկի մը պիտի հանդպին անոնք  
աս գիշեր , ըսաւ ծեր մարդ մը , երբ  
իր տանը գուրսի գուռը գոցելու  
ժամանակը մէյ մը սանկ գուրս նա-  
յցաւ . իբաւցընէ ձախորդ ժամա-  
նակէ , բայց Յովիշաննէս շատ քաջ  
նաւասի մըն է , և Պետսէյ անուն  
նաւն ալ հաստատուն մէկ նաւ մըն  
է . ինձի կ'երեւայ թէ անոնք աղէկ  
կրնան նտուը կաւալարել . ես շատ  
անդամ ասկէց աւելի գէշ փոթորիկ  
ներու պատահած եմ :

Անոնց համար շատ կը ցաւիմ ,  
ըսաւ Ուսէլ տիկինը , որ վերսիշեալ  
ծեր մարդուն տղին կինն էր . ո՞հ ,  
շատ խաւար գիշեր մը պիտի ըլլայ ,  
յիրաւի կը սոսկամ :

Արդեօք փոթորիկին իջնալուն նը-  
շան կայ մի ըսաւ Ուսէլ տիկինը :

Ո՞հ , ըսաւ ծերը , փոթորիկը եր-  
թալով պիտի սաստկանաց :

Աւաղ , սիրելիս , ըսաւ տիկինը ,  
որ ատեն ինքը ահ ու գողի մէջ էր .  
արդեօք ի՞նչ բաներ պիտի գան գըլ-  
խուգ , Աստուած ողորմի քեզի : Արդ-

եօր հօրս նաւը պիտի խորսոսի՞ մի ,  
հարցուց Վննա կոստած սրասով մը ,  
որ տապ տարեկան աղջիկ մըն էր ,  
և իր մօրը նեղսութիւնը տեսնալով  
անոր գիրկը նետառեցաւ , չեմ կար-  
ծեր աղջիկո լսաւ Ոսուկ տիկինը .  
քու հայրդ նաւու կառավարութիւ-  
նը շատ աղէկ գիտէ , տատնկ բաներ  
մաքերնուս անցունելու չենք :

Աստուած ինչպէս որ ցամաքի վր-  
բայ եղողները կը պահպանէ , անանկ  
ալ ծովսւն վրայ եղողները կրնայ պահ-  
պանել :

Բայց փոթորիկը շատ զօրաւոր  
է , լսաւ Վննա . մայր իմ հավին գո-  
ռապ կ'ըլլակն արդեօք :

Գիտեմ շատ սասատիկ կը փչէ , աղ-  
ջիկս , բայց ամմէնքնիս ալ Աստուածոյ  
ապաւնելու ենք :

Չեմ կարծեր որ հայրենիս նաւ-  
ւաբեկութեան հանդիպած ըլլայ , լ-  
սաւ Գուլիկընս , որ տասներկու տա-  
րեկան քաջասիրտ և անխորհուրդ տր-  
զայ մըն էր , ինչու որ ասանկ փոթո-  
րիկի ժամանակ նաւը ցամաքէն հե-  
ռու պահելը շատ աղէկ գիտէ ան :

Բայց հովք շատ զօրաւոր է , Գնու-  
լիկընս , լսաւ Վննա ; և մեծ հայ-  
րենիս մեզի ըստած է որ անոնց գա-  
ցած տեղը ցամաքներու մէջ է , և  
հաւանական է որ հալը անոնք ցամա-  
քը ձգէ :

Ո՞հ , սիրելիս , ինչպէս սիրու գո-  
ռալ պիսաւ :

Դուն միշտ կը վախնաս , լսաւ  
Գուլիկընս , թէ որ քիչ մը հով փը-  
չելու ըլլայ , երբոր ես նաւով ճամ-  
բորդութիւն ընելու ըլլամ , քեզի ոկէս  
վախնաս աղջիկ մը նաւուս մէջը չի  
պիտի առնեմ :

Աղէկ , բայց դուն ծովը ելիկը  
չունիս , լսաւ Վննա :

Եւ մ'ալ հայրս երթալու ըլլայ  
նէ , ես ալ անոր հետ պիտի երթամ .  
լսաւ Գուլիկընս :

Բայց ասիկա իր վերջին ճանա-  
պարհօրդութիւնը պիտի ըլլայ Գնու-  
լիկընս , լսաւ Վննա , ինչպէս որ մայ-  
րըս ինձի ըստաւ :

Ատանկ բան ըստած ես մի անոր ,  
մայր իմ , լսաւ Գուլիկընս :

Այն , տղան . թէոր աս հիմակ  
ուան ճանապարհօրդութիւնը հօրդ  
յաջողելու ըլլայ , կարծեմ մէյ մ'ալ  
ինքը ծովը չի պիտի ելլէ :

Յան աղէկ , լսաւ Գուլիկընս ,  
բայց ես երթալ կուզեմ :

Կարծեմ թէ չես երթար տղաս ,  
լսաւ Ոսուկ տիկինը , ինչու որ այն  
շատ վանդաւոր կեանք մըն է : Երդ-  
եօք որչափ վախ պիտի զգացիր թէոր  
աս գիշեր ծովսւն վրայ եղած ըլլա-  
յիր :

Երանի թէ նաւուն մէջ ըլլայի ըս-  
տաւ Գուլիկընս դողդըղալով մը , ին-  
չու որ աս միջոցին կայծակին ըյալ  
ամմէն մէկ պատուհանէն ներս կը  
զարնէր , և որստումը անմիջապէս  
տունը հիմէն կը շարժէր :

Աերացիշեալ գիշերուան մէջ յան-  
կարծ ելած փոթորիկն ժամանակը՝  
նաւապէտ Յ . Ոսուկին տանը մէջ  
աս տեսակ շատ խօսակցութիւններ  
եղաւ , և փոթորիկը գրեթէ մինչեւ  
հետեւեալ գիշերը տեւեց :

Ոսուկ նաւապէտը կէտ որսալու  
նաւու մը հրամանատարն էր . ասի-  
կա իր կեանքին մեծ մասը այս կեր-  
պով անցուցած էր , և ընդհանրա-  
պէս շատ յաջողութիւն ալ գտած  
էր :

(Պիտի շարունակվէ) :

Ա Ռ Ա Կ

Երկու մեջուիկ :

ՈՐԿՐԱՄՈՒԹԻՒՆ

Երկու մեղուիկ միամիտ  
Ընկեր եղան մէկ մէկու ,  
Ճորեկ ատեն անուշիկ  
Օաղկանց հիւթերն ժողվելու :  
Էսոնց մէկը իմաստուն  
Բայց մէկալը ծոյլու վաս ,  
Ալսան պարտեղ մը սիրուն  
Ուզածներնուն համեմատ :  
Ուշիմ Անդուն ձայն ձբգած  
Անդին հիւթեր կը ժողվեր ,  
Իսկ անհոգը թեերն բաց  
Ալ պլատէր ու կ'երգէր :  
Վէկ մ'ալ նայիս մէկ տեղ մը  
Շիշմ' կը տեսնէ մեղովլ լի ,  
Ու անխորհուրդ անմիտը  
Խոկոյն մէջը կը նետուի :  
Յուսալով թէ գուցէ հոն  
Յագեցընէ իր քաղցը ,  
Անյագ սոված որկորին  
Որս ասյ բաղդին պարգելը :  
Բայց չափաւոր ընկերը  
Ընուշ կ'երգէր անհանդարտ ,  
Վէկ ծաղկոցէն մէկալը  
Ալ թրոչտէր վարդէ վարդ :  
Օըւարթ սրբառիլ իրկըւան  
Եւաւ Գրնաց որ նայի ,  
Ուէ արդեօք իր եղայրը  
Խւր վիթակը գարձաւ մի :  
Տեսաւ զանի գրլսովին  
Անդին մէջը թաթխըւած ,  
Շոլոր ուժէն անխելքը  
Տըկարացած ու ինկած :  
Խեղճը հազիւ սիրտ ըրաւ  
Եւ իր վերջին շընչովլը ,  
Բարեկամին կըցաւ տալ  
Արաժարական ողջոյնը :  
Ուէսկէտ իրեն կեանքին մէջ  
Բզեց քաղցըր ճաշակ մը  
Բայց մեծ կորուստ պատճառեց  
Իրեն անսանձ չար կամքը :

Դմէք , որկրամոներ միտք առէք ,  
Կերածներնուդ աւ չափ դըրեք :

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Արարատ չեռան ջրոյ ։

Մեծն Հայաստանի Արեւելեան  
դիու սահմաններուն մէջ , որոնք հի-  
մակու հիմայ կարնոյ կուսակալու-  
թիւն անուամբ կը գիտուին , Երե-  
ւանու Հարաւային Արեւելեան դին  
36 մզոն տարածութեամք կը տեսնը-  
ւին գմբազդ և խեղճ Արարատայ  
բարձր ու սպիտակ գագաթները . ա-  
նանի որ քիչ մը հեռուէն տեսնողը՝ մէկ  
մը անօր հաստակառաց ու վիթխարի  
մարմինը նկատելով և մէկ մ'ալ անօր

<sup>1</sup> Արարատ լեռան անունը՝ Արամ թագաւու-  
րին որդին Արայ գրաւ . որ Արա կամ գաշտ Արա-  
յի լսուէ . ինչպէս որ Սէբէսի 7 և Խորենացոյն  
գլուխ ժեւ և 78 երեսները ասոր ասանկ ըլլալոն  
կը վկայէն . այսպէս . « Ազա որդի նորա Արայն գե-  
ղցիկ , որով անուն իսկ գաշտին այնորիկ կոչեցաւ  
յանուն Այրարատ : Եւ ո Գայ հասանէ ի գաշտն  
Աւոյի որ և յանուն նորա անուանեալ Այրա-  
րատ : » Խոկ Արեւելեցիք սարվան օրս Արտակ կամ  
Բարձրակ սաղը կը կ'ոչէն զանի , մասի մը պէս ու-  
ղել ինքնիրեն վեր բարձրացած ու կանդնած ըլլա-  
լուն համար :

Նաև մէկ անունն ալ Ազատ կըսմի . ասիկա  
նախնի աւանդութիւնն մի է , որ ջրհեղեղին ջրերը  
քաշիլէն ետև նոյ իւր տապանովը Այրարատայ  
գագաթին վրայ իւրա . որով մարդկային սերունդը  
հոն ալպատթեան տեղի գանալուն նոյն լեռան ա-  
նանը Ազատ ալ ըսլեցաւ . ինչպէս որ Խորենացին  
ալ Արտաշէսի իւր որդւոյն Արտաւազիք սուած  
անէծքին մէջ կը ախչ այսպէս . « Եմէ գոյ յորս  
հեծցիս յաղան ի վեր ի Մասին . գրեղ կացին  
քաշք . տարցին յաղան ի վեր ի Մասին . անդ  
կացցես և զայս մի տեսցես : » Խորե . Գիգք . Բ .  
Գ . Կ . Ա .

Մասին լեռն ալ ոյն լեռան հետ կողած և ասոր  
անունն ալ Խմանիսի անունով կոչված է . Արեւել-  
յիք ասոր ալ Ակրի տաղը կ'ըսեն , որ Արարատանի  
մը լինք ըսլած ըրանց մէջ հասառալուն է . ասիկա  
գաշտի մը մէջ մէկուսի բարձրացած է , և Երկու-  
ծայր անի , որոց մէծ և փոքր Արարատ կ'ըսմի : Ճնն :  
Գ . Բ . համար 4—5 :

Ասոնցմէ ՚ի զատ առ ալ հարկաւոր է գիտնալ  
որ մէր բոլոր Հայաստան աշխարհին Այրարատանն  
թագաւորութիւն կըավիք . վասն զի մէր գիտցալն  
ու քաջն Հայկ իր բոլոր ընտանեօքը Բարիլոնէն եւ  
լըով Արարատ գնաց ու հօն ակսաւ . իրեն բնակու-

բարձր ու ձիւնտիսյլ գլուխը դիտե-  
լով շուտ մը կը հասկնայ այս թշուառ  
ալեւորին , կէս խնտում ու կէս տըր-  
տում ծերուկին առաջուընէ ՚ի վեր  
երեւելի մէկ մը , աղնիւ ու աննման  
դիւցազնց հայր , և անթիւ պար-  
ծանաց ու փառաց թափաւոր մը ըլ-  
լով : Իր գերաստիձան վեհանձնու-  
թենէն և հրաշալի դիրքէն ու բարձ-  
րութենէն կը գուշակին իրեն վազեմի  
անմոռաց պարծանքները , զբոնք մարդ-  
կային որորան ըլլալէն ՚ի վեր վայելած  
է : Արարատայ ամէնէն առջի և մի-  
անգամայն ամէնէն պանծալի և յա-  
ւիտենական փառքը ջրհեղեղէն ետև  
Նշայ տապանը անոր գագաթին վլ-  
րայ իջնալն եղաւ . ուրիէ ետեւ Նշ  
տէրոջը հրամանաւ իւր կնովը , որդինե-  
րովը , թոռներովը և ուրիշ պագիւ աղդի  
կենդանիներովը ցամաքն ելլելովնախ  
և առաջ սեղան մը շինեց ու հոն  
զոհ մասուց ան ամենակարող ու զօ-  
րաւոր Աստուծոյն , որ զինքը արժան  
տեսեր էր այս ահագին և սոսկալի  
պատմէն խալսելու : Օ՞ն . Գ . Ը .  
Համար , 16—22 :

Բացի տակէ Նշայ թոռնը թոռը  
Հայկ իր ընտանիքովը Բաբիլոնէն եւ-  
լելով Արարատ լեռն եկաւ . և իս-

թեան տեղեր շնել և հոնկեց իւր իշխանութեան  
տարածումը սկսաւ ընել . իշտիքս որ Սերէսս քաջ  
պատմագիրն ալ կ'ըսէ . “Արդ՝ այս են անուանիք աղ-  
գածին արանց անդրանիկելոց ՚ի բարելոն գնացելոցն  
ընդ կողմանս հրանոց յերկիրն Արարատայ , չուեաց  
խաղաց գնաց Հայկն ՚ի բարիլոնէ կնաւն և որդւովէ  
քըն՝ և ամենայն ալիսին հանգերձ : Եւ չորակ բնան  
կեցաւ յերկիրն Արարատայ ՚ի տանն որ ՚ի վեռնասինն  
որ զառաշնն շնեալն էր Զքուանայ հուրին և եղ-  
բարըն հանգերձ : Կաեւ “Եւ Հայկն գործաւ ՚ի տե-  
ղի իւր և չուկաւ կալու Հայկն վերկիրն Արարատայ  
և բնակեցաւ անդրէն աղդաւ իւրով մինչեւ ցայժմ :

Իսկ մեր իշխանութեան թագաւորութիւն Ա. Ա.  
րարատան բայելուն մէկ ապացոյցն ալ Սուրբ գիրքը  
կուտայ Երեմայ Ապրութէին բոլոր աղքերը Բարի-  
լոնի գէմ պատերազմի հրաւիրելուն մէջ այսպէս .  
աղասուեր տուք յինէն Ա. Ա. Արարատան թագաւորու-  
թեանցն և Ա. Ա. Արարատան գնդին ու Երեմ . Գ . ծա .  
համոր 27 :

Կցն անաստուած բռնաւորին յաղ-  
թելով՝ հօն հաստատեց մեր թագաւ-  
որութեան սկզբնաւորութիւնը և  
իր անունովը ան տեղ հայք ըսվեցաւ ,  
ուրիշ մենք ալ Հայ անունը առած  
ենք :

Արարատ սուրբ Պրքին մէջի յի-  
շատակեալ ճշմարիտ Արարատն ըլլա-  
լուն վրայօք ոչ մէկը կը տարակուսի .  
թէեւ Եւրոպայի հիմկու նոր մեկնա-  
բաններէն ոմանք ասոր գէմ հակա-  
ռակ կարծիք ցըցուցին , սակայն ուրիշ  
խոհական և իմաստուն անձանց ձե-  
ռօք շուտով այն ծուռ կարծիքը ըստ  
կուեցաւ :

Այս լեռան բարձրութիւնը ու  
բոշեալ չափով մը երբէք չէ հաս-  
տատուած , բայց շատ բարձր եղած  
պիսի ըլլայ . գլուխը ձիւնով և սա-  
ռով պատած է , և երբեմն ալ 160  
կամ 200 մղն հեռաւորութեամբ կը  
տեսնեմի : Այս երկու պարագանե-  
րէն և ունեցած երկայնութենէն կը բ-  
նանք հաստատելթէ ասոր բարձրու-  
թիւնը 15.000 ոոքէն շատ աւելի է :

Նշայ օրերէն ՚ի վեր Արարատայ  
անմասացց գագաթներուն վրայ մար-  
դու մը ոոք երբէք չէ կոխած : Այլ  
և այլ գարերու մէջ շատ փորձեր ՚ի  
գործ գրուեր են այս սոսկալի լեռ-  
նային բուրգերէն վեր ելլելու , բայց  
ամէն չանք պարազը գացեր են . ի-  
րենց ձեւը , ձիւները և սառուցնե-  
րը մէկ անպարտելի մարտկոցներ  
են կազմեր իրեն , և սառնապատ  
սահմանին սկզբմունքէն մինչեւ իր  
ամենաբարձր գագաթին հեռաւու-  
րութիւնը այնքան մեծ է , որ հօն  
քաջութեամբ գիմանալ ուղող որեւ-  
իցէ մէկումը մահուանը մի միայն  
ցուրտը հերիք կ'ըլլայ :

Անոր վերջին ծայրը կամ գոնէ խիստ  
դիւրին մէկ կողմը ելլելու անկարե-  
լիութիւնը քանի մը տարի առաջ Պա-  
յազիսու Փաշայէն ալ վըճուուեցաւ :

Խիստ գեղեցիկ ու պատեհ՝ ժամանակ  
մը խել մը այրացիներալ ճամբայ ե-  
ւաւ քաղքէն, և Պայազիտու դիացէն  
կրցածին չափ սկսաւ լեռնէն վեր ել  
լիլ: Այն ելքին վրայ երեք բնակարան  
հաստատեց, ուր տաղաւարներ շինե-  
լով պաշարներ ժողվեց: Երկրորդ բր-  
նակուրանը ձիւնային անհմանին վրաց  
եր, ուսկից առանց մէկ գժուարութ  
մը կրելու յառաջացաւ, բայց երբ  
կոնսին գագաթը ծածկող առոին մեծ  
գլուխը հասաւ, ալ չկրցաւ յառաջա-  
նալ, ինչու որ իր մարգոցմէն շատերը  
օդուն մեծ անօրութենէ կուրծքեր-  
նին բռնվիցան: Առաջուց անոր  
գագաթը հասնողմն վարձք տալ խոս-  
տացեր եր. թէեւ ստորոտը բնակող  
մարերէն (քիւրա) շատերը ջանացին  
հոն ելլել, բայց անոնց ամէնուն աշ-  
խատութիւնն ալ անպատճ երաւ: Օգուն  
կած սառերուն մեծ կրտորտուքը իր  
մարդոցը վեպա կուտար, որոնք շարու-  
նակարար մէծամեծ սառերէ կորդուե-  
լով վրանին կը թափէին: Ամառվան  
մէջ իր գագաթին վրայօք սառին գր-  
լուխը ձիւնէն բոլորովին տարբեր  
գունով կ'երեւայ, և Ոօռիէն ալ կ'ը-  
սէ, « թէ որ հին բնակչաց խօսին  
հաւտալու ըլլանը, այս մեծ սառաց-  
եալ զանգուածը իրենց առջի գիտցա-  
ծէն ՚ի վեր յայտնապէս աճեր է ո: »

Ոօռիէրս Հայաստան պարսող Եւ-  
րոպացի ճանապարհորդին մէկը, Այ-  
րաբատաց վրայօք այսպէս կը նկարագ-  
րէ. « Աս լեռան ունեցած ձեւ իխատ  
գեղեցիկ և բարձրութիւնն ալ իխատ  
ահուելի է: Ը ըլլակաց բալոր լեռները  
համեմատելով անոր բան մը չեն ե-  
րենար քովը: Ամէն կողմէն կատարեալ  
է. ոչ այնչափ անախորժ տեսք ու ոչ  
ալ արտաքայ բնութեան ցըցուածք-  
ներ ունի. ամէն բան ներդաշնակու-  
թեամբ և լայելցութեամբ է, և բո-  
լորն ալ միաբանած են զանի բնութե

մէջն գերագոյն նիւթերէն մէկը բնե-  
րաւ, Վիկուէն մէկ անհուն գետնէ  
մը ելլելուն, յատակը սարսափելի  
կերպով լայն է. ծայրը ելլելու ճամ-  
բան կամ ելքը մինչեւ ձեռն սահմա-  
նը շատ դիւրին և անկէ անդին շատ  
խորդութորդ է:

Այս հրաշալի գործին յաղթողի  
մը պէս՝ նյոյն խարսխէն սկըզբնական  
զանգուածին մօտ պղտի բլուր մը  
կազմուեր է ձեռով ու դիրքով անոր  
նման, և ամէն մէկ դրութեամբ ինք-  
զինքը բարձր լերանց կարգին մէջ ան-  
ցընելու նըստիրեր է: Կերեկ որ ջրը  
հեղեղէն ՚ի վեր անոր ծայրը մէկը չէ  
ելած, ինչու որ իրեն ձիւնախայլ  
գագաթին շցութարձրութիւնը առանկ  
մէկ անհնարաւոր ջանք մըն է հատու-  
ցած:

Ար իջնալու ատեննիս առջենիս  
ձորի մը պէս տեղ մը բացիցցաւ, ա-  
նանկ որ իմ բոլոր մօտածութիւնս իս-  
կոյն այս ներկայ ակսարանիս մէջ ըն-  
կըզմեցաւ: Տեսայ ընդարձակ գաշտ  
մը, որ անթիւ գիւղերով ու բնակ-  
չօք լեցուն էր. Վամիածնայ եկեղեց-  
եաց աշտարակները և գագաթները  
անոնց մէջէն վեր բարձրացեր էին:  
Երասխի փայլուն ու յատակ ջրերը  
զուարժածազիկ դալարներուն մէջէն  
գըղթըալով կանցնէր, և Երանց ըստո-  
րակարգեալ շարքը նախաջրհեղեղեան  
աշխարհին երկիւղալի յիշատակարա-  
նին խարիսխը կը շըշապատէր: Կարծես  
թէ մարդկացին պատմութեան մէջ  
ջրհեղեղէն ետքի կամ առջի մարդ-  
կանց երկու սեռերուն միայնած կա-  
պակցութիւնն մը կանգնած էր: Բայց  
տակաւին տափարակ գաշտին վրայ  
չէինք հասած տեսայ: Այրաբատ որ  
իր բոլոր ընդարձակ մեծութեամբը  
վեհանձն դիբքով մը հսկայապէս կե-  
ցեր էր:

Կայնած տեղէս անանկ կերեւար որ  
կարծես թէ ամէն մէծամեծ լեռներ-

ըլ իրարու վրայ դիվիեր էին, որպէս  
թէ իրենց հողավը, ապառաժովը և  
ձիւնօվը այս գերագոյն ընդարձակու-  
թիւնը կազմելու :

Իր երկու գլխուն ստունապատ գա-  
գաթները շքեղ կերպով լուսափայլ  
ու պարզ երկնից մէջ կը հասնէր .  
սոկեցոյն արեգակի կը շաղըզար անոնց  
վրայ, և անդրագարձութիւնը միւս  
լոյսերուն նման խառալացնող ձաճանչ  
մը կը ցատկեցնէր :

Տեսարանիս այս վայրիեանը գաշտին  
և գագաթին ծայրագոյն մեծութեանը  
կը միաւորէր : Բայց լեռան վրայ նա-  
յելէս ինձի աղդած զգացումներնե-  
րըս գժուտորին է հոս տեղնկտրագրել  
Աչքս՝ վարի անսահման ծայրերուն  
վրայ թափառելով, չխարսղացաւ անոր  
կատարներուն նսեմոցեալ փառաց վր-  
բայ քչիկ մը հանդարախլ, անանկ որ  
հօրիզոնին մասախուղներուն իրենց  
ընդարձակ գծերը երկար ատեն չկըր-  
ցայ տեսնել, երբ նոյն միջոցին մէկ  
անգատմելի գրգիռ մը մէկէն ՚ի մէկ  
աչքս նորէն գէպի վերերը զարնել  
տալով, անշարժ հայեցուածքս Արա-  
րատոյ ահաւոր փառաց վրայ գարձը-  
նել՝ լուսիպէր, և լուսոյ այս պաշար-  
եալ զգացողութիւնս մաքիս մէջի նը-  
մահօրինակ զգացման համեմատ գա-  
լով մէկէն ՚ի մէկ մասց որոշումը առ  
կախեալ թողուց ։

Յ. Մ. ԳԱԲՐԻԵԼԵԱՆ :

## ԱՇԽԱՌՀԱՐԱՎՈՒԹՅՈՒՆ

Անտոք կամ Անթաքեայ

Աշխարհիս մէջի եղած արեւելքի  
քաղաքներէն մէկն է մեծ Անտիոք  
քաղաքը, որն որ առաջ Ասորեստա-  
նու մայրաքաղաքն էր :

Այս քաղաքը Օրսնթոսի աջ կող-  
մի եղերքին վրայ շնուած է . որուն

ձորը տասը մղնն երկայնութեամբ և  
հինգ կամ վեց մղնն լսյնութեամբ  
արգասաւոր դաշտ մը կը կազմէ :

Երեք հարիւր մղննի շափ հեռու  
Երուսաղէմի հիւսիսային կողմը կյ-  
նայ, և քանի երեք մղնն հեռու Օրսն-  
թոսի Վիջերկրական ծովուն թափած  
տեղը :

Այս քաղաքը Աելիւքս Ակբաթոր  
շնեց և Արևմտեան Ասիոյ մէջի Ա-  
ղեքսանդրի յաղթած սահմանները  
ինքնիշխան միապետութիւն ըրաւ, և  
քաղքին աւ իր Անտիոքս հօրը ա-  
նունը դրաւ : Վերջը անիկա այս նոր  
հաստատուած աթոռը եղաւ :

Այս նոր քաղաքը շատ յարմար և  
կեդրոնական գիրք մը ունենալուն աշ-  
խարհիս մէջի եղած հոչակաւոր քա-  
ղաքներէն մէկը սեպուեցաւ, և իր  
հոչակէն շինալէն զատ Ասիոյ մէջի  
Հառմայու գաւառներուն մայրաքա-  
ղաքը եղած ժամանակը ևս առաւել  
երեւելի եղաւ . նաև Աղեքսանդրիայէն  
և Հառմայէն եաքը երրորդ սեպուե-  
ցաւ նոյն տէրութեան քաղաքներուն  
մէջ :

Աախկին Հրէայ մատենագիրները  
երբ մեծ քաղաքի մը պատկերը նկա-  
րագրել ուղէին շատ անգամ Անտի-  
ոքը կը ցըցունէին :

Հոս շատ Հրէայ կը բնակէր, ին-  
չու որ այս ատենները անոնք Հռով-  
մայու տէրութեան մէջը և դուրսը  
ցրուած էին և աւելի մեծ քաղաք-  
ներու մէջ կը գտնիլէին :

Հրէայները չէ թէ միայն այս քաղ-  
քին մէծութեանը համար մասնաւոր  
կերպով մը յարած էին . հապա ըն-  
դարձակ առեւտուրի քաղաք մը ըլլա-  
լուն և իրենց երկրին մերձաւորութի  
մը ունենալուն համար . բայց այն ար-  
տօնութիւններով՝ զրոնք Ասորես-  
տանի յօն թագաւորները Հռովմա-  
յեց ոց հաստատութեամբը հսնուեղ  
բնակէլ ուղող հրէայներուն նորհեր

էին :

Այս քաղաքը ան ժամանակը չորս առանձին թագերէ կը բաղկանար, աւ մէն մէկը լատ զատ պարխստներով լատած և յետոյ ամէնքը պատափ մը մէջ առած :

Այս թագերը կը ցուցընեն թէ հիմնադրին ժամանակէն մինչև Ենտիոպոս Հպիփանի ժամանակը ետեւէ ետև շնուած էն, և Տիգրիսի վրայի Ուլուսիայէն և Եգիպտասի մէջ Աղքամանգրիայէն շատ պղտիկ չէր :

Հոռվմայեցւոց զանազան թագաւորները շատ կը փափաքէին իրենց կեանքը այս քաղաքին մէջ անցընելու, չէ թէ միայն առտեղի կլիմային ախորժելի և առողջարար ըլլալուն համար, հապա ամէն յարմարութեանց, առատութեան և կենաց զուարձութեանցը համար, նաև երկելի էր յաճախակի տօնախմբութիւններու, բնակչաց կրկէներու մէջ եզած կերպ կերպ խաղերու համար ունեցած եռանդներուն և թարգոններու զբոսանկոներուն համար :

Այս քաղաքը ստէպ և ահագին երկրաշարժներու դէմ դիմացաւ մինչեւ թասրոս պարսիկը յաղթեց առաւ և աւերակ ըրաւ :

Յուսափիանոս կայսրը կրկին շնեց զանիկա և նորէն երկելի տեղ մը ըրաւ, և մինչեւ Խաչակրաց ատենը շարունակեց, և ան ատենուան համար է որ ոմանք կը հաստատեն թէ քաղաքին հարաւային կողմի բլբին վրայ պարսպի կամ ամրոցի մնացորդներ կերեւային :

Ենտիոք քաղաքը Քրիստոսի 1098 թուականին կոտիրոյի և Պօէմօնափ իշխանութեանը տակ եղաղ խաչակիրներուն ձեռքովլը առնուելէն ետքը Քրիստոնեայ տէրութիւն մը եղաւ Ասորեստանու յաղթող Եւրոպացւոց տակը :

Պիմար սուլթանը 1269 ին քրիս-

տոնեայներէն առաւ զանի և բոլոր եկեղեցիները աւերեց, անկէ ետեւ Տաճկաց ձեռքը անցաւ, բայց կրկին իր առջի մեծութիւնը ու բանուակ վահառականութիւնը չափացաւ որ Հայէպի հետ կ'ըլլըլիքը :

Այս ատեններս քրիստոնեայք եկեղեցի մը չունէին, հապա Ա. Յովհաննէս անունով այրի մը մէջ կը հաւաքուելին աղօմքը ընելու համար :

Ենտիոք քաղաքը 1832 ին օգոստոս սի 1 ին Կոպրահիմ փաշան առաւ, բայց ետքը կրկին Սուլթանին առւաւ :

Հ. Ս. ԵՊԻԱՆՑ



## ԲԱՄԱԿՈՒՅԱՅԻ ԹԻՒՐ

Ջրամուկ :

Վըկին անուանը տակ շատ տեսակներ կը դասինն, և առանցմէ միայն մէկ երկու տեսակը մէզի ծանօթ են : Վանք շունմարաններու ու բնակարաններու մէջ գանուած բոլոր վեասակար և նեղացուցիչ կենդանիներն ըլլալը աշխարհածանօթ ճշմարտութիւն մըն է : Վըկիներուն ամէննալաշնայթ են և շատերն ալ խիստ գեղեցիկ . բայց գերազգաբար իրենց վրայ կայենի անէծքը րլլուսն զանոնք գտնողը իսկցն կը ջանայ սպաննել : Այս կենդանիները շատ տեսակ են, և բոլորն ալ էն մեծէն բանէ մինչև փոքր մուկը իրարունմանութիւն ունին : Բուսական բաներ, ընդ եղէն և կենդանեաց մարմին շատ կը սիրեն, և առանցմէ խիստ մեծը և կատաղինթէ որ շատ անօթի լլայ՝ կը համարձակի մինչև անգամ ողջ կենդանիներու վրայ յարձակիլ, նաև տկար ու անզօր մարդկանց մեծամեծ վէրքեր տանի ալ տեսնուեր է : Եկտակը ըսելով, երեմն մեծ ծառայութիւն կընեն գէշ-

բաներ և մեռեալ կենդանիներ ու  
տեղովմին :

Ասնցմէ շատերն ալ քաղաքներու  
աղբանոցներուն ու աղտոտ ջրանցք-  
ներուն մէջ կ'ապրին, ուր աղակցու-  
թիւններով ու խոհանոցներուն մնա-  
ցորդներով կը կերակրպին :

Վնհամար մեծ ու սեաւ բըզեղ-  
ներ կ'ուտեն և մարդու բնակարան-  
ներ ալ մտնելով՝ մէծամեծ վնասներ  
կուտան : Հին ժամանակները Վեծն  
Քրիստոնիոյ մէջ սեաւ մըկները բազ-  
մաթիւ էին. բայց հիմայ բոլոր թուփն  
մըկները զանոնիք չնշած են . ո-  
րոնց ամենամեծ տեսակներէն Վների-  
կայի մէջ շատ կը գանուի : Վզէկ մը  
չեփացուիր թէ հոն Բնչպէս անցեր  
են . բայց հաւանականաբար անոնք  
կը կարծուի որ գուցէ Վնդղայէն  
գացող մարդկանց հետ գացած ըլլան :

Թուլի կամ հասարակ մուկը որ  
մեր բնակարաններուն, շուշմարաննե-  
րուն և ամեն տեղ մէծ չարիքներ կը  
հասցընեն, անմիւս կերպով կը շատ-  
նան : Վս կենդանիները առաւել ջրի  
քով բնակիլ կը սիրեն, որ բանէ մը  
վախցած ժամանակնին խիսյն մէջը կը  
ցատկեն և շատ արագ լողալովմին  
զիրենք կը պաշտօնանեն :

Վմէնառեսակ ընդեղէն, պտուղ.  
թռչուն, նապատառակ և հաւ մէծ տ-  
խորժանօք կուտեն : Ուր տեղ որ կեն-  
գանիներ կը պահմի ան տեղ մուկ շատ  
կըլլայ, և խոզի ախտուներու ալ շատ  
վնասներ կը հասցընեն : Վնչափ ու-  
ժով և համարձակ են որ ասնցմէ մէշ-  
կը հասակաւոր ու խոչօր. կատումը  
ապանած և կերտօր մէկ քանի ար-  
ժանահաւատ մարդոցմէ լոււած է .  
որ իրենք ականատես են եղեր : Ուր  
որ ասանկ մըկներէն շատ կայ, հա-  
սարակ ընտանի կատուները չեն կրնար  
զանոնք հասցընել : Վիսյն որսի շատն  
նէ որ շատ արագ լթաց և խիստ հար-  
ւածով ըլլալուն, կրնայ զատոնք ջնջել.

բայց ասնցմէ մէկը եթէ քթին փակ-  
չելու ըլլայ ալ անոր չմօտենար :

Վյս որկրամոլ կենդանիներովլեց-  
ւած տեղմը շատ գմուարաւ անոնց  
ձեռքէն կտղառվիթ, բայց զանոնք չըն-  
ջելու համար շատ կերպեր կան, և  
ամենէն աւելին միայն թայնը կերե-  
ւայ . սակայն անոնց զգացման զօրու-  
թիւնը այնքան սուր է որ ասովլ ալ.  
դիւրին չէ զանոնք խաբելլը : Վնանկ  
կրտսի թէ մարդու ձեռքովլ գըրուած-  
կերը շատովլ կիմանան և կը թողուն  
կը փախչին և չեն մօտենար անոր, մին-  
չուկ որ ուրիշ զօրաւոր հոտ մը քը-  
թերնին չի մօտնայ :

Վնիսոնին և Վուշկին հոտը այս  
կենդանին շատ կը սիրէ :

Վյս կենդանեաց բնաւորութիւնը  
իրարմէ տարբեր չէ, ինչու որ բը-  
նաւ ուրիշ կերակրի չեն փափաքիր,  
միայն թէ արմատներու և անոնց նը-  
ման ուրիշ տունկերու : Պ բամուկին  
բոլոր երեսոյթքը կը ցուցնէ թէ շատ  
երկատ կենդանի մընէ, մարթը գե-  
ղեցիկ, կակուղ և փայլուն է . գլու-  
խը կարճ և կլոր, ու քիթն ալ այն  
սուր հոտառութեան զօրութիւնը  
չունի . երբոր մարդ մը անոր մեղմ ու  
անվիսա ընթացքին վրայ նայելու ըլ-  
լայ կրնայ ըսել թէ աս կենդանին  
բնաւ ձըճի մը անգամ ուտելու յօ-  
ժարութիւն մը չունի :

Պ ըի մուկը իրեն բնակարանին  
համար առուակներու եղերքները  
կընտրէ, և հոն քիչ մը ջրէ վեր մէծ  
փոս մը կը չընէ : Վյս փոսին առջեւը  
եղած խստերը կը կտրուէ և գեղեցիկ  
մը կը զարդարէ որ մէջի նասողներուն  
հաճելի ըլլայ : Վս կենդանիները տուն-  
կերու արմատներովլ կը կերպարվլին  
որոնք մեռեալ ջրերուն քովիերը եղած-  
խոնաւ ու կակուղ մարդագետիննե-  
րը կ'աճին :

Իրենց կերպակուր ճարելու ժամա-  
նակ թէ որ բանէ մը վախնան իսկոյն

ջրին մէջ կը ցատկեն ու մէկէն ՚ի մէկ ցատկելին ու վար իջնալին շատ գեղեցիկ տեսարան մը կընծայէ : Դըրբին յատակը իջնալու արագութիւնը իր մորթին վրայի եղած օդը մէկ աեղ տանել կուտայ , որ պղտի պղպջակներ ժողվով երբոր կենդանին ջրին մէջ կիջնայ՝ անանկ կերենայ որպէս թէ մարդարտէ զարդարած գտեսա մը հագած է :

Անք թէպէտ ջրին տակ երթալով մէծ աղատութեան միջոց մը կը գըտնէ , բայց չի կրնար շատ երկայն շարունակել . ուստի շուտով վեր կելայ շունչ առնելու համար :

Աս առուակներուն վրայ եղած մըկները ձկնորսներուն շատ ձանձրակի են և շատ նեղացուցիչ . չէթէ կարթին և ձկներուն վկաս մը կուտան , ինչու որ ամենուն հետ առհասարակ անվեսա կերպով կը վարուին , հապա ձկնորսը անոնց խոռոջներուն մէջ մըանելով կը վախցնէ զանոնք և անոնք ալ խկայն ջուրը կը ցատկեն . ուրիէ ձկերն ալ վախնալով մէկմալ հն չեն մօտենար : Խեղճ ձկնորսը կը թռողու այն առուակը ուրիշ մը գրտնելու , ուրուել կրնայ նոյնպէս անյաշալութեան մը հանդիպիլ :

## Տ Ա Տ Ե Ս Ե Կ Ա Ր

Վաճառականութեան սկսց մէկու մը երատ :

Պ. Տօրմէյլ . Հակո :

Լորէնթ . Յ յունվար . 18 —

Վիրելի պարսն , — Պործի մէջ մըանալու միուր ունենալիուդ . համար ինձմէ խրատ կուղէք , և վաճառաւ կանութեան ընթացքին մէջիւապահութեան յաջնակին յաջնութեան լաւագայն միջոցները կուղէք սորվիլ :

Վյունիւթիս վրայօք իմխորհուրդ

ներս ձեզի կուտամ : — Վոաջին , բուր կարելի եղած գիսութիւնները ձեռք ձգելու ջանք ունեցէք , և գրւխաւորար անոնք՝ որ գործքի հետ կապակցութիւն ունին . ասոր հետ պէտքէ որ ուղիղ վարք ունենաք , որով վատահութիւն և յարգ ստանաք . նայեցէք որ պղտիկուց աս գործին մէջ չմնաք , ինչու որ երիտասարդ մէկը տանակ մէկ ձեռնարկութեան մը ոչ փորձը գիտէ ու ոչ ալ անօր վերաբերեալ հարկաւոր գիտութիւնը . և շատ ալ մուշանաք , ինչու որ լաւագոյն պատեհութիւնները զանց առնելովիդ գործոյն մէջ հարկաւոր եղած համարձակութիւն ու եռանդ շատ չունենալով անզգայ ու համբ կերպով կը վարուիք որ չափազանց զգուշութիւնը երբեմն անակնկալ կը կործանէ :

Վղետալի ու վասնգաւոր ժամանակները աւազւաւորի մ'սկիք . քաղաքական ու հասարակ գիտուածները լու դիտեցէք . պատերազմոց ընթացքը նկատեցէք գլխաւորաբար ծովային պատերազմներուն :

Չեր գործերը կառավարելու համար մինչուկ որ չափաւոր գրամագլուխ ձեռք չըձգէք , ինքզինքնիդ գործի մէջ մի խօթէք , որ անձնական պիտոյքներնիդ և գործատան ծախքերնիդ հոգաք :

Վիշտ քիչ մը գրամագլուխ պահեամի ունեցէք անակնկալ պահանձում մը պատահած առեներ գէմ գընելու համար , ինչպէս ընեղունուած առնակներ և այլն :

Վինչու որ առաւել օգտակար պատեհութիւն մը չըլլայ , ընկերութեան մէջ մի մանաք , այլ առաւելուալէս մինակ ձեզի համար պշսատեցէք ու հաւաքեցէք :

Վիրելուուգ կարգադրութիւնը ձեր գործառնութիւններնէդ առաջ ըլլայ , միշտ աղէկ պահեցէք զանոնք ,

կամ իսկոտ զգուշաւոր ուղղութեամբ  
պահել տուեք :

Ե վերաց այսօր ամենայնի աղեկ  
նամակական ոճ սահմանը փութաւ  
չան եզիք, աղեկ նամակ գրելու ար-  
հեաւը վաճառականութեան ամէն  
մէկ ձիւղին մէջ շատ հաղուադիւտ  
ու երեւելիք է, բայց գլխաւորաբար  
առուտուրի մէջ :

Ամէն ընդունած նամակներնուգ  
պատախանելու պատրաստ եզիք, ո-  
րըն որ ձեր թղթակցուցն շահուցը  
ունկնդիր ըլլուղիդ կը ցուցունէ, ու  
յանձնարարութիւններ կ'ըստանաք :

Ամէն սահմանի մէջ երեւելիք տու-  
ներու հետ հաղորդակցութիւն ու-  
նեցէք, ան տուներուն հետ՝ որոնք  
որ ամբիծ, ճշդապահ և հաստատուն  
են, և որոնց որ գործքը ձերինին հա-  
ւասար է, վասն զի օրինակի համար  
գլխաւորաբար գինի բերել տուողնե-  
րը միշտ աղեկ չեն սեպուիր ձեռա-  
կերտական ապրանքներու և հունձ-  
քերու մէջ :

Ինքզինքնիդ զգոյշ պահեցէք ա-  
ննցմէ՝ որոնք երկդիմի բնաւորու-  
թիւն ու երկդիմելի հաստատութիւն  
ունին, ձեր համբաւը բոլոր աներեկ-  
քայ յարդութիւն ունեցաղ տունե-  
րուն հետ ըրած գործանութիւններ-  
ուուդ համեմատ կը բարձրանայ :

Դոլոր յարդոց հետ ամէն տուն  
քաղաքավարութեամբ վարուեցէք, և  
իմաստուն ու խոհեմեղանակով, առ  
բանս ձեզի պատուաւոր պիտի ընէ  
ու կարօսութեան և դժուարութեան  
առն ձեզի համար բարեկամութիւն  
ու նեցուկ կը պատրաստէ :

Յաջողութեան մէջ ինքզինքնիդ  
մի մասնաք, յաջողութիւններովինիդ  
մի հապրամանաք ; և ոչ ալ ձախոր-  
դութեան անեն յուսահամերիք : Գիտ-  
ցէք որ բարդին այլայլութիւնը մի-  
լինները կ'ոչնչացնէ :

Ա երջին սատիճան ձիշտ ու ժա-

մանակապահ եղիք, ձեր խոստմունքը  
կատարելու : Որշափ որ կարելիք է  
պատրաստ գրամով ծախեցէք ու գը-  
նեցէք, կամ եղածին չափ կարճ պայ-  
մանով, այս կանոնը գործածելով խա-  
ռըն ի խուռան գործերու մէջ խառ-  
նուելու դիպուածէն կ'զգուշանաք,  
որոնք յաճախակի կը կործանեն զմար-  
դը :

Առանց խորհրդակցութեան բա-  
նի մը ձեռք մի զարնէք, հապա բո-  
լը եղանակներնիդ խորհրդով կշռե-  
ցէք, անզգոյշներն ու անխորհուրդ-  
ները միայն պատահհմամբ կը յաջողին :

Կանոնաւոր կեանք մը վարեցէք,  
ծախքիրնուգ վրայ սանձ մը դըրէք.  
ասիկա ձեր համբաւը պիտի պահ-  
պանէ, և աւելի դիւրին է պահել  
քան թէ վասարկիլ :

Թէ որ շփոթութիւն կամ դառն  
վիճակի մէջ լինաք, առաջին անգամ  
պէտք է խրատ առնէք, բայց ձեր  
խրատատուներնուգ խոհական ընտ-  
րողութիւն մը ըրէք, զանոնք էն ա-  
ռաջ ան մարդոց մէջ վրնտուեցէք,  
որոնք նմանապէս ասանկ պարագայ-  
ներու մէջ մատաճն, և անկից՝ ուրիշ  
մէկ քանի անձանց ալ կարծիքը ա-  
ռէք . խրատ առնելու զանցառու-  
թիւն ընելն, և իրենք իրենց չա-  
փազանց վասահանալով շատ վաճա-  
ռականներ կործանման մէջ ինկած են :

Գործունեայ, անդուլ, պարկեցու,  
և անկեղծ եղիք, բայց մի կարծիք որ  
բնաւորութիւն ու առ աքինութիւն-  
ներնիդ յաջողութիւն կը խստանան .  
ոչ, այլ ասանկ ընելով ամէն դիպ-  
ուածներու մէջ ձեր արդարութեան  
սայդ վկայութիւնը , և խոհեմու-  
թիւնն ու իրաւանց հրամաններուն  
համեմատ գործած ըլլալնուգ միխ  
թարութիւնը կունենաք, անանկ որ  
գործերնուգ վախճանը ինչ որ բլայ  
խոհական մարդոց յարդը և երկնից  
հաճութիւնը կը վայելէք :

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ԲԵՍՔԻՏԱԿԱՆ ԶԲՈՍԱՆՔՆԵՐ

Վանակ հեցուկ մը շնուել որ երբոք բերանց բանանք  
չոյս տայ

Յէկոր՝ մեխակի իւղով լեցուն ապակիէ անօթի մը մէջ կտոր մը փոռ փոր դնենք, հեղուկը միշտ լուսաւոր կ'երևայ; Յէկոր մութ տաեն անօթին բերանը բանանք, Այս կերպով սպառաստուած ապակիէ անօթով մը շատ զուարձալի փորձեր կրնայ ըլլալ. օրինակի համար թէ որ սե թուղթի մը վրայ զատ զատ գրերով այլ և այլ բաներ գրենք և յետոյ ան գրերուն տեղերը կտրենք հանենք, և ան թուղթը ապակիէ անօթին վրայ բակցընենք գրերուն սպառալ տեղերը լուսաւոր կերևան, յայտնի է որ կրնանք նաև առ կերպով լուսաւոր ծառեր և զանազան ուրիշ առարկաներ երևցընել:

Փուռի մը մէջ հաց եփած տեշը չեր ցանկեցնեն

Հացը փուռը նետելէ դ առաջ, քորակիէ, ծծմբէ, և սնդիկիէ բաղչեցած խառնուրդով մը լեցուն ընկուզի կեղեւ մը գիր հացին զանդուածին մէջ և անանկ կերպով մը անիկա գոցէ որ չկարենայ դուրս ելլել: Հացը եփել սկսածին պէս, կը տեսնանք որ փուռին մէջ կը ցատկուաէ: Յէկ որ սիսեռներուն մէջ տեղը մէյմէկ քիչ մնդիկ դնենք և ջուրով եփենք, ջուրը պազչալ սկսածին պէս սիսեռները մէկն կսկսին անօթին դուրս ցատկել: Այս կերպով է նաև որ սեղանին վրայ խնձորներ կը ցատկեցընեն ձեռնաւճուները՝ անսնոց մէջ տեղը մէյմէկ քիչ մնդիկ դնելըն ետքը անսնք եփելով, յայտնի է որ ասոր պատճառը սնդիկին, տարածականութենէն և կազի փոխուելու ունեցած յատկութենէն յառաջ կուգոյ:

Մէկան գժիուն մացերը տնկուցընեց և անոնք ցուաւոր երեւցնեց

Այս փորձո ընելու համար պէտք է անանկ մէկը ընտրել սրուն մազերը կարծ և առանց փոմաժայի ըլլան: յետոյ անիկա գլուխը բաց առանձին ելեկտրական գործիքին ապակիէ առթուին վրան կայնեցնել և ուժով անիկա ելեկտրացնել. այս առեն թէ որ ուրիշ մէկը իր ձեռքը կամ 9 փըթամատ բարձրութեամբ մետաղէ տախտակ մը անօր գլխուն մօտ բըլանէ մազերը կսկսին տնկուիլ. և թէ որ ժամանակի գիշեր կամ տեղը մութը ըլլայ լուսաւոր կ'երևենան:

Զուրբ առանց կրոկի եփել

Տարկ ծծմբային թթւուտը ջուրին հետ միանալով շատ մը չերմութիւն գուրս կրթափէ, այս պատճառաւ երբոր ծծմբային բարկ թթւուտէն 66 տափիճանի չափ կամ անկից աւելի հաւասար մաս ջուր առնենք և իրարու խառնենք և այս խառնուրդին մէջ 25 տափիճան ջուր պարունակող պափիկ և նեղ խողովակ մը խոթենք ջուրը կսկսի տաքնալ և եռալ: Այսոր պատճառը ասէ որ ջուրը և թթւուտը իրար խառնուելով ելած տաքութիւնը խառնուրդին մէջ չի սղմելով խողովակով գրուած ջուրին կանցնի:

## ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

## Ը Ա Ա Կ

Մթեփ եւ լուր:

Դաշնակցութեան շարասիրաց եղերական է կատարած:

Ժաղով երեմն կաղմեալ լուսց կոչեն զմլժեխոս ՚ի խորհուրդ, Օթնչ այս, ասեն, մարդկան առ մեղ

Գուտպոր ահեղ ՚ի զայրոյթ :  
 Եւ որս՝ ընկերք , մեք զմեր քընար  
 Հարեալ և գուք ՚ի պար գոռ ,  
 Եցուք , ձայնեն , յատեան մարդկան  
 Խընդրել զանձին մեր անդորր :  
 Զայք ընդ բանիցն ՚ի ձեալ մըսէնիք  
 Համ և հաւան ընդ նոսին ,  
 Արեք , գոչն , ո բարեկամք  
 Յայս ձեանարկել միասին :  
 Հատ գոռ խուժան գաշնակցելոց  
 Թողին ըզվայրն և յարեան ,  
 Խումքք գօտեպինք երաժըտոց  
 Ո զհետ նոցին որբացան :  
 Այն ինչ գաւաջ ելին մարդկան  
 Դասք գուտանաց բայլ ՚ի բայլ ,  
 Քանի շրաինդն ահեղադոչ  
 Հարաւ ՚ի վայրն բարձրասոյլ :  
 Դամիր մըսէիխաց աւեալ ընդ օդ  
 Կըշուն ըզմեւս ծափաձայն ,  
 Եւ լուք պարեն որտարնդոստ  
 Կայտուեն բերկրին անդ համայն :  
 Այս տեսիլ յոտն ՚ի շրտապ  
 Խոտղան մարդիկ համասփիւռ ,  
 Եւ կոտորած ահեղ ածեալ  
 Ջընջեն ընչիկս պառըսպուռ :

Առակիս միաքը աս է . օր մը  
 լուերը<sup>1</sup> ժողովլ մը կազմելով կ'իմացը-  
 նեն մժեխներուն<sup>2</sup> օր իրենք ալ գան  
 ու իրենց հետը մէկտեղ խորհրդակից  
 ըլլան , ու ձար մը գտնեն ինքվինքնին  
 մարդոց ձեռքէն խալսուելու , առ ջին-  
 ները կը գտանան կըսեն մէկանե-  
 րուն . “ աս ինչ բան է աղքարներ ,  
 աս ինչ մէծ ձուն է օր ամէն օր ան  
 օրէն մարդիկ մեր գլխուն վրայ կ'ի-  
 շեցընեն ու փոխան մեր անսնց տուած  
 այնքան զբօսանքներուս կը բռնեն  
 մեղ ու կ'սպաննեն . ասոր մէկհատիկ  
 Ճարը , կ'ըսեն մժեխները , ասիկա է .  
 գիշերին մէկը մենք նուագարան  
 ները չալելով ու գուք յաթկատելով

մարդոց առաջը կ'ելենք ու ասով  
 անսնց սիրտը կ'առնենք ու կ'աղաչենք  
 անոնց օր ասանկ միշտ զիրենք կըզքօս  
 ցընենք թէրոր ալ մեղ չըսպան  
 նեն : Ժալովակաները առ հասարակ  
 ծափ զարնելով հաճութիւն կուտան  
 ասոր ու եսպինները նուագարաննին  
 չալելով առ ջններն ալ մէկ սորի վրայ  
 պարելով մարդոց գիմացը կ'ելեն .  
 մարդիկ ինչպէս օր ամէն գիշեր անսնց  
 տուած ինայժերուն վրայ սիս պահեր ,  
 անանկ ալ աս գիշեր սաստիկ նեղա  
 ցած ըլլանուն կէս քուն ու կէս ար  
 թուն էին . երբոր կ'իմանան իրենց  
 տուած կըսկծնուն հետ քնարներուն  
 սաստիկ գոչումները որ բիւրաւոր  
 մժեխներ մէծ եռանդով ու եղանակ  
 ներով կը չալէին , և նոյնպէս նուաշ  
 գարաններուն համեմատ բիւրաւոր  
 լուերուն յաթկատելով , օր մարդոց  
 երեմունուն բերաննուն վրայ անդգուռ  
 շութեամբ . մէկ գետին ու մէկ սոր  
 կը պարէին , մէկէն կը ցատկեն կ'ելեն  
 ու հոն ամէնքն ալ բռնելով կը չնջեն :

Կանկ ալ մարդկացին ազգին մէջի  
 չարասէրներուն խումբերը օր մը չէ նէ  
 օր մը անշուշն կը կործանին ու կը ջըն-  
 ջըլին թէ օր իրենց չար ու անելա-  
 նելի ճամբան չթողուն ու դարձի  
 ըը գան :

ԱՆ ՏԵՂ<sup>1</sup>

Մնձեղը գեղեցիկ թռչուն մըն է ,  
 Երկայն պոչով ու կարճ թեւերով . Իր  
 գոյնը աղնիւ ու փայլուն է , բայց այն-  
 չափ գէշ բնաւորութիւններ ունի օր-  
 իրեն ունեցած բնական աղւորու-  
 թիւնը կ'աւերեն , պատեհութիւն մը  
 ձեռք բերածին պէս չարութիւն ը-  
 նելէ բնաւ չդադարիր , և թէկ ին-  
 քը ընտանի վիճակի մէջ ալ ըլլայ եր

<sup>1</sup> Բիրէ :<sup>2</sup> Սիլքի սինէկ :<sup>1</sup> Ասդուղան :

բնական յատկութիւնը կը պահէ :  
 Հոգմայու մէջ սափրիչին մէկը ան-  
 ծեղ մը ունէր որուն վրայ զարմանա-  
 լի մտաց կարողութիւն մը կար , որ և  
 իցէ բանի ինքովնքը նամանցընելու :  
 (Օր մը քանի մը փողահարներ խա-  
 նութիւն առջև փող կը չալէին , ան-  
 ծեղը անձայն մտիկ ըրաւ , ու քանի  
 մը օր շարունակ ձայն չըհանեց , և  
 տիմուր ու վաշագին ընթացք մը ըլու-  
 նեց . . այս բանը զինքը գիտցողները  
 շատ զարմացուց , և անանկ կը կարծէին  
 որ փողերսւն ձայնը՝ թէ իր ձայնը և  
 թէ լսողութիւնը կորուցնցուցած ըլ-  
 լայ : Այսկայն անոր լուս կենալուն  
 պատճառը աս էր որ բոլոր ատեն խո-  
 րին մտածութեամբ իր ձայնը փողե-  
 րուն ձայնին նմանցընելու զբաղած  
 էր , ուստի օր մը յանկարծակի ա-  
 նանկ ձայն մը հանեց որ Ճիշդ փողե-  
 րուն ձայնին նմանութիւնը ունէր ,  
 թէ անոր եղանակներուն , թէ կանկ  
 առած տեղերուն և թէ եղանակաց  
 փոփոխութիւններուն կողմանէ : ( Պ

նոր համարը իր առջի սորվածները  
 բոլորսվին մոռցընել առւաւ :

Միշտ պատրաստ եղիր , նախանե-  
 սութիւնը յաջողութեան աջ աչքնէ :  
 Կեղծ բարեկամը արեգակնային  
 ժամացոյցին տախտակին վլայի եղած  
 մէկ ստուերն է օր բաց օդի մէջ կ'ե-  
 րեւնայ և ամսկ մը ծագած ատենը  
 կ'ոչնչանայ : —

Տնութեանը խորհուրդ հարցմար ,  
 անիկա քեզի կը սորվեցընէ . առանց  
 հարստութեան բաւականաւալ , ար-  
 ծաթսիրութեան մոտիկ ըրէ ան ալ կը  
 սորվեցընէ քեզ , հարստութեան ժա-  
 մանակ ինեղծ ու թշուառ ըլլալ : —

### ՀԱՆԵԼՈՒԿ

Չեմ կենդանի ոտք ու չունիմ .  
 Բայց ամեն աեղ միշտ կու շարժմ .  
 Թէ բարեկամն որ ձեռք բերէ ,  
 Զիս յարդութեամբ կու գործածէ ,  
 Իսկ թշնամիս որ զիս տեսնէ ,  
 Մինչուկ իր մահն կու բանտարկէ :

### ԾԱՆՈՒՑՈՒՄ

Մեսրոպեան ընկերութեան կողմէն Մոտղիկ Արեւելեանին խըմբագիր և  
 վերատեսուչ կարգուած է ընկերութեանս անդամներէն մէկը և աս ուետ  
 րակիս վերաբերեալ բոլոր արտաքին հալզորդակցութիւնները անոր յանձ-  
 նուած է , ուստի արժան կը համարիմք ծանուցանել մեր յարդոյ ընթերցո-  
 զաց որ պէտք եղած ամէն թըզթակցութիւնները անոր պիտի ու զջուին .  
 Դուրսէն գալիք նամակ մը եթէ Անբանը Արդարեան Պ . Յարութիւնին  
 գրասունը ճգուելու ըլլայ անպատճառ խըմբագրին ձեռքը կը հասնի :